# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՕՎԵՐ ՓԼԵՅ ՍՊԸ-ն ԱՐԵՆԻՀ-ԷԱՃԱՊԲ-04/26 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 3 | Չափերը՝ երկարությունը՝ 1340մմ,լայնությունը՝ 1340մմ, բարձրությունը՝ 693մմ: Կառուցվածքային առումով կարուսելը պետք է պատրաստված լինի մետաղական հիմքով՝ պտտող միավորով, նրբատախտակի հարթակով, հավաքովի նստատեղերով: Մետաղական մասերը ներկված են պոլիմերային էմալի փոշեներկով: Նրբատախտակի մասերը ներկված են NORDICA ներկով կամ համարժեք ակրիլատի հիմքի ներկով և պատվում են TEKNOCOAT լաքով կամ համարժեքով: Ներկածածկույթը ստեղծում է դիմացկուն մակերես: Բոլոր ամրակները և խողովակների ծայրերը պատված են դեկորատիվ պլաստմասե փականներով: Բոլոր ամրակները պետք է ցինկապատ լինեն: Տեղադրումն իրականացվում է բետոնացման միջոցով: Կարուսելի ներսում տեղադրված են երեք առանցքակալներ: Մեկը՝ համաձայն 80210Н ԳՕՍ 7872-89 և երկուսը՝ 80210 ԳՕՍ 7242-81: Պտտման միավորը բաղկացած է առնվազն 108 մմ տրամագծով խողովակից, որն ունի առնվազն 3 մմ պատի հաստություն և առնվազն 85 մմ երկարություն: Ստորին ծածկը և վերին ծածկը եռակցված են խողովակին: Բացի այդ, խողովակին եռակցվում է առնվազն 6 մմ հաստությամբ և առնվազն 220 մմ տրամագծով թիթեղից պատրաստված կտոր: Բազրիքը պատրաստված է 757 մմ խողովակից, որի պատի հաստությունը 2.5 մմ է: Բռնակներն և օղակը եռակցված են բազրիքի վերևում: Բռնակները պետք է պատրաստվեն 21,3 մմ տրամագծով խողովակից, 2,8 մմ պատի հաստությամբ և 253 մմ երկարությամբ: Օղակը պետք է պատրաստված լինի 25 մմ տրամագծով խողովակից, պատի հաստությամբ ՝ 1,5 մմ և երկարությամբ ՝ 1862 մմ: Նստատեղը պետք է լինի եռակցված կառուցվածք ՝ պատրաստված Ø33.5 մմ խողովակից, 2.8 մմ պատի հաստությամբ: Եռակցված կառուցվածքը պետք է տեղադրված լինի 18 մմ նրբատախտակի |

| | |
|---|---|
| | նստատեղով: Նստարանները պետք է տեղադրվեն հարթակի վրա հատուկ անցքերի մեջ և ամրացվեն միացումներով: Յուրաքանչյուր նստատեղի միջնամասի տակ, կարուսելի ամբողջ կառուցվածքի ամրության համար, տեղադրվում են երկու ուղղահայաց ձողեր: Տեղափոխումը և տեղադրումը իրականացվում է մատակարարի կողմից: Սահմանվում է մեկ տարվա երաշխիքային ժամկետ: Ապրանքի մատակարարման պահին պետք է ներկայացվեն անվտանգության և համապատասխանության հավաստագրեր արտադրողի բնօրինակ կնիքով: Գույնը համաձայնեցնել պատվիրատուի հետ: Տրվում է 12 ամսվա երաշխիք; Տեղադրումն իրականացվում է մատակարարի կողմից: Աշխատանքը սկսելուց առաջ պետք է ներկայացվեն բնօրինակ կնիքով անվտանգության և համապատասխանության հավաստագրերը: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Овер Плей ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱՐԵՆԻՀ-ԷԱՃԱՊԲ-04/26 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 3 | |